

ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԸ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, ժամը 13-ին, Փարիզի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպիսկոպոսը, ի պատիվ Հայոց Հայրապետի, տվեց ճաշկերույթ, որին հրավիրվել էին մասնավորաբար Փարիզի քույր եկեղեցիների հոգևոր պետեր, պետական պաշտոնական անձնավորություններ, Փարիզի հայոց կրոնական ընկերակցության վարչության և ներկայացուցչական ժողովի անդամները՝ շուրջ 30 հոգի:

Ճաշկերույթին ներկա էին Ֆրանսիայի երեսփոխանական ժողովի արտաքին գործերի հանձնախմբի նախագահ և նախկին վարչապետ Մորիս Կուվ դը Մյուրվիլը, Հույն օրթոդոքս եկեղեցու Մելիտիոս միտրոպոլիտը, Փարիզի քաղաքագլուխ Ժակ Շիրակի տեղակալ, երեսփոխան Պիեռ Բասը, Փարիզի արքեպիսկոպոս կարդինալ Ֆրանսուա Մարտին և նրա քարտուղար հայր Հյուգը, պրոֆեսոր Ժան Գոդմենը, Արտաքին գործերի մինիստրության կրոնական գործերի խորհրդական Լյուսիեն Ռենյոն, Ամերիկյան եպիսկոպոսական եկեղեցու եպիսկոպոս Ռիչարդ Միլարը, Մոսկվայի ռուսաց պատրիարքության ներկայացուցիչ եպիսկոպոս Պիեռ Լուիլիեն, Ռումեն օրթոդոքս եկեղեցու եպիսկոպոս Լյուսիեն Ֆլորեան, Ֆրանսիայում ավետարանական համայնքներ ֆեդերացիայի նախագահ, վերապատվելի Ժակ Մորին, Հույն կաթոլիկ եկեղեցու եպիսկոպոս Նասրալլան և այլ պաշտոնական հրավիրյալներ:

Ճաշկերույթի ժամանակ ելույթներ ունեցան կարդինալ Ֆրանսուա Մարտին, Ամերիկյան եպիսկոպոսական եկեղեցու անունից՝ Ռիչարդ Միլարը և ավետարանական համայնքների անունից՝ Ժակ Մորին:

Ճաշկերույթի բացումը կատարեց տ. Սերովբե արքեպիսկոպոսը հետևյալ ֆրանսերեն ուղերձով.

«Ձերդ Գերաշնորհություն,
Սիրեցյալ եղբայրներ ի Քրիստոս,
Մեծահարգ պարոն Նախագահ,
Տիկնայք և պարոնայք,

Թույլ տվեք ինձ հայտնել իմ խորին շնորհակալությունները ձեզ բոլորիդ, այստեղ ներկա գտնվող մեր բարեկամներին, որոնք, ընդառաջելով

մեր հրավերին, բարեհաճեցին այսօր, մեզ հետ միասին, շրջապատել մեր կաթողիկոսին սիրո այս սեղանի շուրջ, որ մենք նկատում ենք մեզ բոլորիս ոգեշնչող էկումենիկ ոգու, սիրո և եղբայրության արտահայտություն:

Նորին Սրբությունը գալիս է քրիստոնյա Հայաստանից, այն երկրից, որտեղ մեր թվագրության առաջին իսկ դարերից քարոզվեց Ավետարանը և որտեղ քրիստոնեական կրոնը, աշխարհում առաջին անգամ լինելով, հռչակվեց որպես պետական կրոն, Հայկական թագավորության կրոն:

Այն ժամանակ է, որ ամբողջ հայ ժողովուրդը, խանդավառված իր նոր հավատով, ստեղծեց քրիստոնեական փառավոր մի քաղաքակրթություն, հատկանշվեց բարձր մշակույթով և այնպիսի հարուստ ճարտարապետությամբ, որն իր ցայտուն արտահայտությունը գտավ բազմաթիվ հուշարձանների, վանքերի և եկեղեցիների մեջ, որոնք, ավա՜ղ, բարբարոս ցեղերի կողմից բազում ներխուժումների ենթարկվելով, վերածվեցին փլատակների և մոխիրների: Բայց այդ մոխիրների մեջ մեր սուրբ Գրիգոր Լուսավորչի կանթեղի անմար բոցը երբեք չդադարեց լուսավորել և վերակենդանացնել հայ ժողովրդի հավատը իր պատմության ամենամռայլ ժամանակներում:

Այսպես ուրեմն, մեր կաթողիկոսը գալիս է Էջմիածնից—որը 302 թվականից ի վեր մեր եկեղեցու աթոռանիստն է և մեր հավատի օրրանը—մի անգամ ևս մխիթարելու Իր հավատացյալ զավակներին, որոնք ցրված են աշխարհով մեկ այն ցեղասպանության հետևանքով, որն այնքան վայրագորեն ճղակտոր արեց մեր ժողովրդին համաշխարհային առաջին պատերազմի ընթացքում: Արդարև, մեքենականացած մի աշխարհում, որտեղ նյութական հաճույքները թվում են, թե գերիշխում են հոգևոր արժեքների վրա, կրոնը անվիճելիորեն մնում է այն միակ ազդեցիկ միջոցը, որը թույլ է տալիս մարդուն իր ամենօրյա խռովահույզ գոյությունից վեր բարձրանալ՝ որոնելու համար բարոյական և հոգևոր ավելի խաղաղավետ մի կյանք:

Մի անգամ ևս սրտագին շնորհակալություն ձեզ բոլորիդ, որ բարեկամության և համակրանքի ձեր զգացումներով մասնակցեցիք այն սիրույն և հարգանքին, որ մենք և Ֆրանսիայում ապրող մեր հավատացյալները ցանկացանք արտահայտել բազմադարյան հայ առաքելական եկեղեցու Գերագույն Պետի նկատմամբ»:

Սույն պաշտոնական ճաշկերույթին Հայոց Հայրապետը հանդես եկավ հետևյալ ճառով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՓԱՐԻԶՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ

(31 մայիսի 1979 թ.)

Ձերդ Գերազանցություն,

Սիրեցյալ Եղբայրներ Մեր ի Քրիստոս,

Մեծահարգ Տիարք,

Աստուծո ողորմությամբ և հրավերովը Ֆրանսայի հայոց ազգեպիսկոպոս գերաշնորհ տ. Սերովբե Մանուկյանի, կանոնական այցելության եկանք Ֆրանսա հայ եկեղեցիներում և Մեր հավատացյալ զավակներում, բերելու անոնց բոլորին Աստուծո օրհնությունը հայ ժողովուրդի քրիստոնեական հավատքի մոտ երկհազարամյա կեդրոն սուրբ Էջմիածնեն: Եկանք նաև մուտեն ծանոթանալու մեր հավատացյալ ժողովուրդի հոգևոր կյանքին և

Մեր հորդորներով առավել զորացնելու կրոնական հավատքը անոնց սրտերուն մեջ, ու հրավեր կարդալու որ ամուր և անաղարտ պահպանեն քրիստոնեական առաքինությունները իրենց կյանքի ընթացքին և հավատարիմ մնան մեր եկեղեցվո բազմադարյան ոգեկան ու մշակութային ավանդներուն ու փոխանցեն զանոնք իրենց նոր սերունդներուն:

Այս երջանիկ առիթով, ուր որ գտնվեցանք Ֆրանսայի մեջ, ամեն տեղ հոգեկան մեծ մխիթարությունը ունեցանք վայելելու եղբայրական սիրալիր վերաբերումը բարձրաստիճան ֆրանսացի հոգևորականներու և հարգալիր ուշադրությունը պետական և քաղաքային իշխանությանց մեծանուն անձնավորություններուն, որոնց խորապես երախտապարտ կմնանք:

Եվ ահա այսօր ևս այս սեղանին շուրջ շրջապատված ենք ի Քրիստոս եղբայրներով, ի գլուխ ունենալով Փարիզի արքեպիսկոպոս Նորին Գերազանցություն կարդինալ Ֆրանսուա Մարտին, և բարձրաստիճան պատկառելի ներկայացուցիչներով ֆրանսական կառավարության և ազգին:

Խորապես զգացված ենք այս բոլոր արտահայտություններուն համար և զանոնք պատիվ կհամարենք Մեզի և մեր եկեղեցիին, հայ առաքելական եկեղեցիին:

Ինչպես ծանոթ է ձեզի, Մենք կուգանք երկրե մը, Սովետական Հայաստանեն, որ գաղափարական-ընկերային տարբեր հիմքերու վրա կառուցված է քան արևմտյան երկիրները, հետևաբար բնական է թե մեր եկեղեցին ևս ապրի ու գործե յուրահատուկ պայմաններու մեջ: Պատմության ընթացքին եկեղեցիները, միշտ շարունակած են իրենց առաքելությունը, որ հոգևոր ու բարոյական դաստիարակության առաքելություն մըն է ժողովուրդի մը ծոցին մեջ: Ահա այդ է նաև մեր եկեղեցվո առաքելությունը այսօր Հայաստանի մեջ, ուր կգտնվի պատմական Աթոռը հայ առաքելական եկեղեցվո: Եվ հիմնված Մեր գահակալության քսանչորս տարիներու փորձառության վրա, կրնանք վկայել թե մեր եկեղեցվո կրոնական գործունեությունը այսօր բնականոն կերպով կզարգանա առանց դժվարություններու, վայելելով բարյացակամ ուշադրությունը պետական իշխանությանց:

Հիմնված նույնպես այս տարիներու Մեր փորձառությանց վրա, Մենք հաստատապես կվկայենք թե կրոնական զգացումը իրոք խորապես մարդկային երևույթ է և անփոխարինելի հոգեկան պահանջ: Անգամ մը ևս կըհաստատվի թե մարդկային ոգեկան աշխարհի մեջ, իրապես Հիսուս է՝ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը:

Մեր օրերուն եկեղեցիները դեմ-հանդիման կգտնվին նաև հարցերու, որոնք կառնչվին արդի խռովահույզ աշխարհի կացությանց: Դաստիարակչական հարցեր, բարոյական հարցեր, ընկերային և նույնիսկ քաղաքական հարցեր: Մեր համոզումն է որ այս տեսակետեն ևս Քրիստոսի Ավետարանը ստույգ այժմեություն ունի և իր բարերար նպաստը կրնա բերել կառուցմանը համար ապագա մարդկային աշխարհի մը, որ ըլլա ավելի ազատ, ավելի արդար և ավելի խաղաղ: Մանավանդ Քրիստոսի սիրո և խաղաղարար ոգին, փրկության ճանապարհ է բոլոր ժողովուրդներու համար: Աշխարհը ամբողջ պետք է լեցնել Քրիստոսի սիրո և խաղաղության շունչով: Այդ սեպուհ պարտականությունը կատարել կփորձենք նաև Մենք, իբրև առաջին սպասավորը հայ եկեղեցվո: Բայց մանավանդ հռոմեական կաթոլիկ եկեղեցին է որ այս վերջին տարիներուն իր բարձր հեղինակությամբ լսելի կդարձնե խաղաղության իր պատգամը ամեն հունվար 1-ին:

Թույլ տվեք այստեղ հիշել հատված մը այս տարվան հունվար 1-ին

Նորին Սրբություն Հովհաննես Պողոս Բ Պապի պատգամեն. «Տե՛ր Աստված, պահե-պահպանե մեզ պատերազմեն, ո՛րևէ պատերազմե: Հա՛յր մեր, որ երկինքն ես, Հա՛յր կյանքի, Տվի՛չդ խաղաղության, կաղաչե քեզի Պապը՝ զավակը ազգի մը, որ պատմության ընթացքին և մասնավորապես մեր դարաշրջանին, ամենեն շատ տուժածներեն մեկը եղավ պատերազմի սարսափներեն, վայրագություններեն և աշխարհակործան աղետներեն: Կաղաչեմ քեզի աշխարհի բոլոր ժողովուրդներուն համար, բոլոր երկիրներուն և բոլոր ցամաքամասերուն համար: Կաղաչեմ քեզի հանուն Քրիստոսի, որ Իշխանն է խաղաղության»:

Կարդալով Սրբազան Պապին այս ներշնչված, հուզիչ խոսքերը, Մեզի այնպես թվեցավ, թե անոնք արտասանված են հատկապես նաև մեր ժողովուրդին, հայ ժողովուրդին համար, որ լեռ ժողովուրդի ճակատագիրը ունեցավ 1915-ին, զոհը դառնալով մեր դարու առաջին ցեղասպանության, Արևմտյան Հայաստանի մեջ, ուր մոտ երկու միլիոն հայ քրիստոնյա բնակչությունը բնաջինջ եղավ Օսմանյան կայսրության հրամանով և Վիլհելմյան Գերմանիո լուռ անտարբերությամբ:

Հետևաբար, գուցե ավելի քան այլ եկեղեցիներ, մեր եկեղեցին իր մեծ վիշտը սրտին մեջ ծրարած, իր հոգիի բովանդակ ջերմությամբ կմիացնե իր աղոթքը բոլոր քույր եկեղեցիներու աղոթքներուն, որ այլևս երբեք ու ոչ մեկ տեղ աշխարհի վրա չկրկնվին նման ողբերգություններ:

Այժմ Մենք կգտնվինք այս գեղեցիկ մեծ երկրի մայրաքաղաքին մեջ, ուր այնքան կենսուրախ ու ազատ կբաբախե սիրտը ամբողջ ֆրանսացի ժողովուրդի: Ի բոլոր սրտե Մեր ջերմագին աղոթքը առ Աստված կբարձրացնենք, մաղթելով որ փառքերու այս երկիրը Ֆրանսան միշտ զարգանա ու ծաղկի խաղաղության մեջ, և ֆրանսացի ժողովուրդի հոգևոր ու իմացական հանճարը շարունակե լուսատու ջահը մնալ քաղաքակիրթ ազգերու մեծ ընտանիքի առաջին շարքերուն:

«Այնուհետև, եղբարք, ողջ լերուք, հաստատուն կացէք, մխիթարեցարուք, միաբան լերուք, խաղաղութիւն արարէք. և Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ» (Բ Կորնթ. ԺԳ 11): Ամեն:

* *
*

Նույն օրը, ժամը 16-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց Փարիզից ոչ շատ հեռու գտնվող Ռենսի քաղաքի «Դպրոցասեր տիկնանց» գիշերօթիկ վարժարանը: Վարժարանի տեսչուհի օրիորդ Հռիփսիմե Գարագաշյանը արտառուչ մի ճառով ողջունեց Հայոց Հայրապետի շնորհաբեր այցելությունը: Աշակերտության կողմից կատարվեցին հայրենաշունչ երգեր, արտասանություններ, խմբերգեր:

Վերջում վարժարանի տեսչությանը, դասախոսական կազմին, պաշտոնեությանը, տիկնանց խնամակալ մարմնին և աշակերտությանը ուղղյալ խուստական ճառով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը՝ Իր գոհունակությանը և օրհնությանը արժանացնելով այդ կրթական հարկի տակ հայ աղջիկների հայեցի դաստիարակության ի նպաստ կատարվող օրինակելի և շնորհակալ աշխատանքները:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը վարժարանին նվիրեց ս. Էջմիածնից բերված հուշանվերներ: